



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի բաժնետիրոջն և տնօրենների խորհրդին

Մեր վերապահումով կարծիքը

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքը» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն առ 2019թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2019թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Վերապահումով կարծիքի հիմքը

Ընկերության ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 90,482,477 հազար դրամ: Ընկերությունը հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նկատմամբ երբևէ արժեզրկման ստուգում չի կատարել, չնայած որ որոշ նախորդ ժամանակաշրջաններում եղել են արժեզրկման հայտանիշներ՝ անբարենպաստ տնտեսական պայմաններ, Ընկերությունն աշխատել է վնասով: Այդ ակտիվների փոխհատուցվող գումարի գնահատման համար տեղեկատվության բացակայության պայմաններում, մենք հնարավորություն չենք ունեցել հաստատել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 2019 թ. դեկտեմբերի 31-ի և 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

«Փրայստոյթերհաուս Գուպերս Արմենիա» ՄԴԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am



Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Հնկերությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի («Վարքագիր») սկզբունքներին համապատասխան, և մենք կատարեցինք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ Վարքագրին համապատասխան:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՏՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հնկերությունը լուծարելու կամ Հնկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հնկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ որպես ամբողջություն, զերծ են սխալներից կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝


- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի պատճառով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախությամբ պայմանավորված էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել



համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:


- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքների համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն ղեկավարի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Հնկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումներն և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու ղեկավարն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի ու ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:


Ալեքսեյ Դոյսանով
Գործադիր տնօրեն

Pricewaterhouse Coopers




Մերգեյ Յակովլև
Աուդիտոր

10 մարտի 2020թ.

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

**«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Տիրանապական վիճակի մասին հաշվետվություն**

հազ. ՀՀ դրամ	Մարզ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	29,040,503	30,448,189
Ոչ էյուրոպական ակտիվներ	9	61,441,974	61,455,459
Շահութահարկի գծով ոչ ընթացիկ կանխավճարներ		-	113,740
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		90,482,477	92,017,388
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	10	2,880,404	3,006,721
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	1,009,980	996,011
Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվներ		1,057,347	68,419
Վաճառքի համար պահվող ակտիվներ		34,156	34,156
Ժամկետային ավանդներ	12	7,386,277	5,401,232
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	417,451	340,387
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		12,785,615	9,846,926
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		103,268,092	101,864,314
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	104,152,946	104,152,946
Կուտակված վնաս		(6,781,167)	(7,895,329)
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		97,371,779	96,257,617
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		250,702	258,101
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություն	23	2,179,029	2,404,362
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		2,429,731	2,662,463
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	2,085,886	1,696,131
Կրեդիտորական պարտքեր անձնակազմին		626,944	567,835
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		51,004	46,494
Այլ պարտավորությունների և վճարների գծով պահուստներ	16	702,748	633,774
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,466,582	2,944,234
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		5,896,313	5,606,697
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		103,268,092	101,864,314

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2020թ. մարտի 10-ին:


Ալեքսեյ Մելնիկով
Գլխավոր տնօրեն




Վեներա Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ

**«Հարավկովկասյան էրկաթուղի» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**

հազ. ՀՀ դրամ	Օնթզ.	2019թ.	2018թ.
Հասույթ	17	22,166,192	21,519,303
Վաճառքի ինքնարժեք	18	(17,090,699)	(18,222,679)
Համախառն շահույթ		5,075,493	3,296,624
Այլ գործառնական եկամուտ	19	402,372	985,301
Իրացման ծախսեր	20	(132,221)	(132,705)
Ընդհանուր և վարչական ծախսեր	21	(2,375,471)	(2,433,144)
Այլ գործառնական ծախսեր	22	(1,746,579)	(1,216,579)
Գործառնական շահույթ		1,223,594	499,497
Տոկոսային եկամուտ		518,565	401,701
Շահույթ մինչև հարկումը		1,742,159	901,198
Շահութահարկի գծով ծախս	23	(627,997)	(349,932)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՑԹ		1,114,162	551,266
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐԹԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		1,114,162	551,266

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Շնորհներ սեփական կապիտալ
Առ 1 հունվարի 2018թ.	104,152,946	(8,446,595)	95,706,351
Շնորհներ 2018թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	551,266	551,266
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	104,152,946	(7,895,329)	96,257,617
Շնորհներ 2019թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,114,162	1,114,162
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	104,152,946	(6,781,167)	97,371,779

**«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

հազ. ՀՀ դրամ	Օկթգ.	2019թ.	2018թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչ շահութահարկով հարկումը		1,742,159	901,198
Ճշգրտումներ.			
Մաշվածություն և ամորտիզացիա	8, 9	4,499,333	4,405,378
Կոնցեսիոն ակտիվների բարելավումից ստացված ոչ դրամական հասույթ	17, 24	(2,564,298)	(3,460,050)
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	22	1,219,649	507,042
Եկամուտներ ակտիվների ապամոնետավորումից	19	(31,014)	(337,924)
Տոկոսային եկամուտ		(518,565)	(401,701)
Ոչ կյութական ակտիվների դուրսգրում	22	-	191,884
Փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս/(եկամուտ)	19, 22	45,004	(45,767)
Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով պահուստի աճ	22	194,596	283,218
Պաշարների դուրսգրում	22	98,507	7,358
Այլ պահուստների աճ	22	133,756	100,041
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխությունները		4,819,127	2,150,677
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի աճ		(206,178)	(3,561)
Պաշարների նվազում		37,012	515,042
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ		350,796	229,929
Շրջանառու կապիտալի փոփոխություններ		181,630	741,410
Ստացված տոկոսային եկամուտ		531,527	241,230
Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվների վճարում		(988,928)	(62,356)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		4,543,356	3,070,961
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,044,722)	(2,094,800)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		31,513	185,827
Ոչ կյութական ակտիվների ձեռքբերում		(824,098)	(858,466)
Ժամկետային ավանդների տեղաբաշխում		(6,529,440)	(4,400,000)
Ժամկետային ավանդների մարում		3,900,000	2,500,000
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		(4,466,747)	(4,667,439)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		455	5,440
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	13	340,387	1,931,425
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	13	417,451	340,387

Ներդրումային գործարքները, որոնցով չի պահանջվել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում, ներառված չեն դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում և բացահայտված են Ծանոթագրություն 24-ում: